# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«23» դեկտեմբեր 2016թ.

**Հաստատում եմ՝**
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-103/16 բողոքը քննող
հանձնաժողովին

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 և 21.12.2016թ. թիվ 03/73-3/28330-16 գրություններով ներկայացված «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03511675) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

### 1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 07.10.2016թ. թիվ 1-289-16, 10.10.2016թ. թիվ 1-296-16 և 14.10.2016թ. թիվ 1-307-16 գրությունների հիման վրա, 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով

ուսումնասիրել «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 10.11.2016թ. թիվ 01/04.2/4070-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 գրությամբ ներկայացված «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.12.2016թ. թիվ 03/73-3/28330-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետով՝ անհրաժեշտ է նախաձեռնել «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

## 2. «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 21.10.2016թ. թիվ 01/04.2/3861-16 գրությամբ դիմել է «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին և առաջարկել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 122.1-րդ կետի համաձայն՝ Կենտրոնի ծանուցումն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել ներկայացված նյութերի վերաբերյալ կարծիք և (կամ) հիմնավորող փաստաթղթեր:

Ընկերությունը 08.11.2016թ. Կենտրոնին հասցեագրված թիվ 14/16 գրությամբ հայտնել է, որ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից 23.09.2016թ. ընկերությունը էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացվել է, որ պետք է շտկվի որոշ անհամապատասխանություններ, որի համար տրվել է մեկ աշխատանքային օր

ժամանակ: «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ն 24.09.2016թ. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է Պատվիրատուի կողմից պահանջված փաստաթղթերը, սակայն Ընկերությունը չի կարող ասել, թե ինչ պատճառով այն չի ստացվել վերջինիս կողմից, որի արդյունքում «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ն դուրս է մնացել գնման ընթացակարգից:

Վերոհիշյալ գրությանը կից Ընկերությունը Կենտրոնին է ներկայացրել շտկված տարբերակը էլեկտրոնային փոստով պատվիրատուին ուղարկելու փաստը հավաստող ապացույցներ (Ընկերության էլեկտրոնային փոստից համապատասխան արտատպումներ):

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով 27.12.2016թ. ժամը 17:45-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-103/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Կենտրոնում 27.10.2016թ. ժամը 16:20-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի տնօրենը պարզաբանել է, որ Ընկերությունը էլեկտրոնային փոստով ստացել է «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումը, ինչից հետո 24.09.2016թ. պատվիրատուին ուղարկել է ընկերության կողմից պահանջված անհամապատասխանության շտկված տարբերակը, սակայն հետագայում պարզվել է, որ Ընկերությունը խախտում է թույլ տվել՝ չի շտկել նշված անհամապատասխանությունները, ինչի արդյունքում «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պարտավորության խախտում:

**3. «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 07.10.2016թ. թիվ 1-289-16, 10.10.2016թ. թիվ 1-296-16 և 14.10.2016թ. թիվ 1-307-16 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/13» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի վերաբերյալ ի հայտ եկած տեղեկատվությունը և ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 27.12.2016թ. ժամը 17:45-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-103/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. ՍՑ-ԳԲԽ-103/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 և 21.12.2016թ. թիվ 03/73-3/28330-16 գրություններով ներկայացված «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/13» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 04.09.2016թ. հայտ է ներկայացրել «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ն:

2. «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետև նաև՝ Հանձնաժողով) 16.09.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ն ճանաչվել է հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից՝ վերջինիս առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Հանձնաժողովի 23.09.2016թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչի պայմաններում Հանձնաժողովի նիստը ընդհատվել է մինչև 26.09.2016թ., իսկ Ընկերությանը 23.09.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցվել է՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Հանձնաժողովը 26.09.2016թ. ժամը 16:00-ին կայացված նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ 23.09.2016թ. ընդունված որոշմամբ նախատեսվող շտկումը Ընկերության կողմից չի կատարվել, որի արդյունքում «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

5. «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի 24.10.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեից (vvardanyan.am@mail.ru) Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին

(urbanpiu.gnumner3@gmail.com) 24.09.2016թ. ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը «pdf» տիպի ֆայլով:

6. Կենտրոնը 10.11.2016թ. թիվ 01/04.2/4070-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 գրությամբ ներկայացված «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը առկա չեն:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.12.2016թ. թիվ 03/73-3/28330-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետով՝ անհրաժեշտ է նախաձեռնել «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

**5. ՍՑ-ԳԲԽ-103/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 և 21.12.2016թ. թիվ 03/73-3/28330-16 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 07.10.2016թ. թիվ 1-289-16, 10.10.2016թ. թիվ 1-296-16 և 14.10.2016թ. թիվ 1-307-16 գրությունները, «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 24.10.2016թ. թիվ 14/16 ներկայացված գրությունը և գրությանը կից ներկայացված էլեկտրոնային փոստի արտատպումները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ներառված

են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝ ***ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն***, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշվել է, որ Հանձնաժողովի 23.09.2016թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչի պայմաններում Հանձնաժողովի նիստը ընդհատվել է մինչև 26.09.2016թ., իսկ Ընկերությանը 23.09.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցվել է՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի 24.10.2016թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեից (vvardanyan.am@mail.ru) Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին (urbanpiu.gnumner3@gmail.com) 24.09.2016թ. ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը «pdf» տիպի ֆայլով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնն արձանագրում է, որ նման պայմաններում Ընկերությունը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, քանի որ ներկայացված էլեկտրոնային փոստի արտատպումներից երևում է, որ Ընկերությունը Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ պահանջը կատարել է:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել, ուստի գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-3/24091-16 և 21.12.2016թ. թիվ 03/73-3/28330-16 գրություններով ներկայացված «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03511675) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-103/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան